

եւ զյիշատակարանս գրեցի, եւ զոտանաւորքս ասի:» Եւ իրօք կայ 31 տուն ոտանաւոր մը ութվանկեան, որուն կարմրագիր սկզբնատառերը կը կազմեն՝ «Յովհաննէս վարդապետի ասացեալ զայս բանս:»

Յովհ. Խուլ նոյն իսկ 1624ին Պոլիս էր, բնականապէս իբրեւ Պատրիարք: Ասան զի Գր. Ա. Դարանաղցին կը գրէ. «ի թվին ՌՀԳ (= 1624) եկաւ Մելքիսէթն բազում անառակօք եպիսկոպոս անուանօք եւ սուտ վարդապետով իւր համախոհօքն, գոչելով որպէս զառիւծ, եւ Զաքարէին օժանդակութեամբն, եւ խլոյն ի թիկունս լինելովն, սկսան անխտիր ուտել ի պաս աւուրս զձէթ եւ զգինի, յայտնի հրապարակաւ, եւ զոչ ուտողսն անարգէին, որ բազում ժամանակաց հետէ օրինաւոր եւ ճշմարիտ վարդապետքն մեծ վշտօք եւ դառնակրիւք հաղիւ կտրեր էին եւ բարձեր ի միջոյ, եւ այլ բազում անառակութիւնք եւ հեքձախօսութիւնք, որ չէ ժամանակն պատմելոյ. նա Սեբաստացի Ներսէսն որ ճշմարտութեան իրաւանցն Սստուծոյ ջատագով էր եւ սրբասէր էր, զնա ի ժամանակին աջողելովն Սստուծոյ անդ եղեւ մեզ զօրավիգն, որ քահանայիւք եւ բազմամբօս ժողովրդովք հաղիւ կարացաք ցրուել զչար ժողով նոցա եւ հալածական առնել ի քաղաքէն մեծէ: Եւ նա գնաց ի Սկիթացւոց աշխարհին, որ այժմ լեհ ասի:» («Բիւզանդիոն», 1907, Թ. 3424:) Կաթողիկեայ Հայերու օրինօք ներեալ էր եւ է պահոց օրերը ձուկ, ձէթ եւն ուտել, որ եւ